

Ե Հ Պ Ա Պ Ա

Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թ ի թ 17.

1858

Ա. Հ Ա Ց Ա Բ



Ա Ն Ի Բ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Պ Ս Տ Ի Փ Լ

Երիտանական կղզեաց ամենէն տիսուր եւ անախորժ ամիսը Հոկտեմբեր ամիսն է. աս ժամանակս կը սկսին ամէն կողմ թանձր մէգ ու մառախուղ պատել, ցուրտ ու խոնաւ օրեր զիրար կը յաշորդեն. ցօղակերպ տնձրեւ մը կծու հովի հետ ընկերացած՝ աներէ գուրս գտնուող անձանց մեծ նեղութիւն կը պատճառէ եւ մատաղ ու տկար կազմութիւն ունեցողներուն առողջութեան դարանակալ կը լայ: Այսպիսի տիսուր եւ անձրեւային օր մը Մենչեսդրի փողցներուն քանի մը տժդյն անցաւորաց մէջ ազնուական գէմբով երիտասարդ մը գէպ ի դանոն փողցը կը յառաջանար: Պատանին շատ վտիտ ու տկար էր. իր գեղնած երեսն եւ ապակւց նման փայլող աշուշները տեսնող յայտնի կ'իմանար թէ խեղճը ծիւրական ախտէ բռնուած է:

Ուշքարտ Լաւրենս — այսպէս կը կոչուէր հիւանդ պատանին — իր կենաց տասնուվեցերորդ տարիէն սկսեալ իր այրի մօրն եւ տասնամեայ քրոջը մի միայն օգնականն. եւ պաշտպանն էր: Աղքատութիւնն իր մատաղ հասակէն զինքն ընկճած, եւ իր կրած խիստ աշխատութիւնն, անդադար գրասեղանի առջեւ գրելու եւ օրինակելու ըրազելն, իր բնութեամբ տկար կաղմանն աւելի եւս տկարացուցած եւ ան ողորմի վիճակը հասուցած էին: Իր տիրոջը գրասենեակը դանոն ըսուած նեղ փողցին մէջ կը դանուէր, ուր արեւն իր ճառագայթիւնը շատ քիչ անգամ կ'արձակէր, իբրեւ թէ կ'ամրէնար անոր բնակչաց անարդ արծաթափակալ թիւնը տեսնելու. միայն կէսօրներն անոր ծխուած տներուն յարկերուն մէջէն քիչ մը ժամանակ ներս կը նայէր:

Կրինտեմի վաճառականութեան տունն՝ ուր Ռիքարտ ստորին գրագրի պաշտօնը կը վարէր, Մենչեսդրի ամենէն հին եւ հարուստ տներէն մէկն էր. իր ստորագրութիւնները գրամասեղանին եւ ակմբանոցներու մէջ թղթագրամի պէս կը նդուենուէին, թէպէտ եւ մէկ կողմանէ ալ ժողովրդեան մէջ կը խօսուէր թէ աս տան գործոլութիւններուն մէջ շատ անիրաւութիւններ կը լայ: Վաճառականութեան բուն տէրն ու գլուխը Ճիլպերդ կրինտեմի, վաթսնամեայ ամուրի ծեր մըն էր. իր արտաքյ կարգի ադահութիւնն եւ ընչափրութիւնը թող չէր տուած որ ընտանեաց տէր ըլլայ եւ իր ստակին մէկ մասն անոր պիտոյիցը գործածէ: Իր ընկերն ու բաժանակիցը Սմալասոր հակառակ մեծ լնտամիք ունէր — երեք որդի եւ երեք գուտսոր — զորոնք առուտուրին շահէն իրեն ինկած փոքր մասովն՝ հազեւ կը նար կերակրել, որովհետեւ նոքր գրամագլուխ դրած ըլլալով՝ պատիկ մասով մը պէտք էր շատանալ: Սակայն աս մարդս ամէն տեսակ մնութիւններն իր մօրը կաթին հետ ծծած կ'երեւար. աղքատութեան մէջ ձնած եւ կրինտեմէն իր ծառայութեան մէջ առնուած, կամաց կամաց յառաջ գնաց եւ մինչեւ իր տիրոջը բաժանակից եղաւ. բայց ասով գոհ չէր, այլ կ'ուզէր իր տիրոջը բոլոր ստացուածքը կ'երպով մը ձեռք ձգել: Գրեթէ առուտուրի գործողութիւնները բոլորովին իր ձեռքն էին. կրինտեմի միշտ իր առանձին սենեկին մէջ կը կենար եւ միայն շատ երեւելի գործքերն անձամք կը կատարէր: Սմալէն ետքը գրասենեկին մէջ երկրորդ կարգը կը բռնէր կրիտի հաշուէկալն՝ ինք զինքը բոլորովին արրեցութեան տուած մարդ մը, որ իր մանկութենէն ի վեր կրինտեմին քով կը գործէր եւ արտաքյ կարգի ընթացք մ'ունէր. ուղած ժամանակը գրասենեակ կու գար, երբ որ կ'ուզէր կ'երմար, ինչ որ կ'ուզէր կ'ընէր. Սմալ շատ անդամ իր մեծին կը սէր թէ աս անօդուտ գինեմոլն՝ որ իր անուան մեծ նախատինք կը բերէ, քովէն հանէ, բայց իր խօսքերն ամենեւին աղբեցութիւն չէին ըներ: Յայտնի կ'երեւար թէ Ճիլպերդ մասնաւոր շահ մ'ունէր աս մոլի հաշուէկալն իր քովը պայմէլու: Թէ արդեգք ասոր պատճառը ուէրն էր թէ երկիւղը, մեր պատմութեան ընթացքին մէջ պիտոր տեսնենք:

Վրասենեկին միւս չորս սպասաւորներն էին Սմալին երեք օրդիքն, երեք անկիրթ եւ իրենց հօրը նման մոլի երիտասարդներ, եւ Ռիքարտ Լաւրենս որուն ինչ պաշտօն ունենալն արդէն գիտենք: Աս եօթն անձէն զատ նաև Կրիստեմին քեռորդին եւ Համարեալ ժառանգը, Հենրիկ Պրայէմ պատանին վաճառականութեան գործակից էր, բայց գրեթէ անուամբ միայն, վասն զի իրօք քիչ անգամ գործք մը կը կատարէր:

Վրասենեակին մէջ ամէն մարդ իր սեղանին առջեւը նստած՝ լոռութեամբ իր գործքին կը զբաղէր երբ որ Ռիքարտ անձրեւէն բոլորովին թրջած՝ ու ցրտէն գողալով դռնէն ներս մտաւ:

— Շատ ուշ մնացիր, ըսաւ իրեն Սմալ տհաճութեան ձեւով մը:

— Տէր, պատասխանեց պատանին մեղմութեամբ, ձեր ուղած անձինքը դեռ իրենց գրասենեակն եկած չէին. Հարկ եղաւ երկայն ժամանակ անոնց սպասել, աշաւասիկ տամակներն ու փոխանակագիրներն: Աս ըսելով ծոցէն կապոց մը թուղթ հանեց Սմալին տուաւ եւ կ'ուղէր իր գրասեղանին առջեւն անցնիլ եւ սովորական գործքերուն զբաղիլ: Բայց Սմալ նշանով մը զննիքը կեցուց եւ Շատ կը ցաւիմ որ ըսաւ, ստիպուած եմ զբեղ այսպիսի օդին անգամ մ'ալ գուրս իրկել, ուրիշ գործք մ'ալ կայ կատարելու զըր առտօւանց ձեզի ըսելու մոռցայ. իրը շատ կարեւոր է եւ հարկ է այսօր լմնցընել:

— Պատրաստ եմ երթալ, պատասխանեց դարձեալ պատանին:

— Եկու դուն իմ տեղը նստէ, ես կ'երթամ, ըսաւ ձեր հաշուեկալն իր աթոռէն վեր ցատքելով:

— Դեռ ձեր հաշիւներն օրինակած չէք, պոռաց Սմալ:

— Օանոնք Ռիքարտ ալ կրնայ օրինակել:

— Բայց ես չեմ ուղեր:

— Կուղէք խեղճը մեսցընել, ըսաւ. Կրիտիցած ձայնով, չէք տեսներ ինչպէս գունատած եւ տկար կ'երեւայ. այսպիսի օդի մը ժամանակ եւ ոչ շուն մը տնէն դուրս կը խրկուի: Ցիշեցէք որ դուք ալ հայր էք. քիչ մը դութ ունեցէք:

— Գործքը միշտ գործք է, պատասխանեց Սմալ. իմ յանցանքով չէ որ իմ սպասաւորս ծիւրական ախտ ստացած է: Վրասենեկին գործքերը չեն կրնար ետ մնալ:

— Տէր, պատրաստ եմ երթալ, կրնեց նորէն Ռիքարտ, հիմայ զիս շատ աղէկ կը զբամ. առողջութիւնս առաջնէն շատ աւելի աղէկ է:

— Տէր հազ մ'իր խօսքը կտրեց. իր աչուըներն աւելի եւս մարած երեւոյթ մ'առին: Կրիտից աս բանս տեսնելուն պէս սկսաւ մեծ քայլերով գէպ ի օրինտեմին առանձին սենեակն յառաջանալ:

— Ուր կ'երթաս, հարցուց Սմալ կատաղութիւնէն այլագունած:

— Դու տիրոջդ հետ խօսելու, պատասխանեց ձերը:

— Ենամօթ դրուժան:

— Դրուժան, կրկնեց կրիտիք. Ուստի աս իշխանութիւնն ինձի գրուժան լսելու. գուցէ անկէ որ հողաթափ մաքրողէ մը սենեկի սպասաւոր եւ անկէ վաճառականութեան բաժանակից եղար: Եթէ ես աս գինեմոլութիւնը չունենայի, հիմայ ես ալ քու տիրոջ բաժանակիցն էի: Ի վերայ այսը ամենայնի ամենեւին իշխանութիւն չունի զիս դրուժան անուանելու:

Կայ ժամանակին յանկարծ կրինտեմին սենեկին դուռը բացուեցաւ եւ վաճառականն իր քեռորդույն հետ դուրս ելելով՝ մեղմ ձայնով մը հարցուց:

— Ի՞նչ կը նշանակէ աս դղոգիւնը:

— Են կը նշանակէ որ, պատասխանեց կրիտիք մեծ պլայլութեամբ, ձեր բաժանակիցը համարձակեցաւ իր երեք օրդւոցն եւ տէր Ռիքարտին առջեւն ինձի Դրուժան ըսել. որովհետեւ ուղեցի աս խեղճ պատանացն տեղ, որ ինչպէս կը տեսնէք, մինչեւ ուղեցները ժթրած եւ ծանր հիւանդ է, քաղաք երթալ եւ իր ըսելու գործքը կատարել: Դուք կրնաք վկայել թէ ես աս անուան արժանի եմ թէ չէ:

— Ասուգիւ արժանի չես, ըսաւ Կրինտեմ դժուարութեամբ մը. եւ իր բաժանակիցին դառնաւը. Շատ կը զարմանամ Տէր Սմալ որ, ըսաւ կը համարձակի մեր ծեր հաշուեկալին հետ աս կերպով վարուիլ:

— Խոսքը մեծ պլայլութիւն պատճառեց անգութ բաժանակիցին: Մոլի արբշիռ մ'իր բաժանակիցէն վեր գասել, մոտածեց իրեն, ասոր տակ գաղոնիք մը կայ պէտք է որ ասիկայ իմանամ:

Հենրիկ նոյն ժամանակն Ռիքարտին մատենալով՝ Սիրելի, ըսաւ, դուն հիւանդ սաստիկ հիւանդ ես. իմ մօրեղբայրս ամենեւին չուպեր որ քու առողջութիւնդ վասնդի մէջ կյանայ: Եսպը Սմալին գարձաւ, եւ աւելցուց. Ամենեւին չէի կարծեր տէր, որ այնշափ քիչ մարդկային զգածմունք ունենաք այսպիսի բան մը մոտածելու:

Իր աղաշանքով կրինտեմ Ռիքարտին ամիս մը հրաման տուաւ տունը մնալու եւ իր առողջութիւնն հոգալու: Պատանին աս հրամանը շնորհակալութեամբ ընդունեցաւ եւ իր երկու պաշտպաններուն ալ մասնաւոր շնորհակալ ըլլալէն ետքը Հենրիկին բերել տուած կառքին մէջ մոտաւ եւ տուն փութաց իր հիւանդութեան գարման տանելու:

Կայ իրիկուն երկու բարեկամք հիւանդ պատանացն այցելութեան գացին. թէպէտ եւ Ռիքարտ մեծ յցս ունէր որ ամիս մը հանգիստն իր առողջութիւնը նորէն պիտոր հաստատէ եւ աս պատճառաւ զուարթութեան մէջ էր, սակայն իր անդադար հազէն եւ նոյն իսկ զինքը գարմանելու համար կանչուած բժշկին դէմքէն յայտնի կ'երեւար թէ հիւանդին վիճակը շատ վտանգաւոր է: Ռիքարտ բժշկին պատուիրելով անկողին տարուելէն ետքն իր բարեկամներն իրեն եւ իր մօրն ու քրոջը բարի գիշելը

մաղթեցին եւ անկէ հեռացան: Կրինտեմ Ճամբան
բժիշկը մէկ կողմ՝ մը տանելով. Տէր, լսաւ, կը
խնդրեմ որ ինձի համարձակ լսէք թէ մեր հիւան-
դին առողջանալուն յցս կայ թէ չէ:

— Վիհայն հրաշք մը, պատասխանեց բժիշկը,
կընսյ զինքն աս ախտէն աղատել. արդէն մահուան
ձեռքն իր վրայ հասած է. հազիւ քանի մ'օր ալ կը-
նայ ապրիլ:

‘Օ՛երուննւյն աս խօսքէն զգացած տրտմուշ
թիւնն արտաքս կարգի եղաւ. իր հին բարեկամին
որդւոյն աս կերպով դեռ իր ծաղիկ հասակին մէջ
կորուստն եւ անով խեղճ ընտանեաց մը բոլորովին
անօգնական եւ վերջին կարօտութեան մէջ մնալն
իր գութը սաստիկ շարժեցին: Հիմայ ժամանակին է
որ, ըստ ինքն իրեն, ակնածութիւնը մէկդի թողում,
եւ ինչ որ մարդկութիւնն եւ արդարութիւնը կը պա-
հանջէ ի գործ գնեմ:

Կրիտլին իր տիկորոց վրայ ունեցած մեծ ազգեց ցութիւնն արտաքսյ կարգի դէպքէ մը յառաջ կռ գար : Մեր պատմութեան սկսելէն տասնուորութեան յառաջ, իրիկուն մը կրիալի իր գինեսիրութեան մշղուած՝ կրինտեմին դրասենեկին տակը գտնուած գինուոյ շտեմարանը մտած էր, եւ հօն իրարու ետեւէ գաւաթներ կը պարպէր . յանկարծ տեսաւ թէ իր տէրը կոնակը մեռել մ'առած՝ շտեմարուին սանդղախն վար կ'իջնար : Ծեր հաշուեկալն իր տեղն անշարժ մնաց ուղելով՝ դէպքին վախճանը տեսնել : Կրինտեմ մեռելը զգուշութեամբ անկիւն մը դնելէն ետքն, անոր դրապանէն թերթակալն հանեց, մէջէն քանի մը թրութեր առաւ, եւ առանց ոտնաձայնի նորէն սանդղախն վեր ելլելով՝ աներեւոյթ եղաւ : Կրիտլի անմիջապէս մեռելին քովը մօտեցաւ եւ ձանչցաւ թէ անիկայ Ռիդ քարտին հօրը մէկ ազգականին ծառան էր որ նյոյն օրը Հնդկաստանէն եկած էր : Աս հարուստ ազգականն իր մահուան ատեն իր 130,000 լիրայի չափ ստացուածքը, բեգերս Լաւրենսին ձգել ուղելով՝ որ կրինտեմին քով գրագիր մըն էր, փոխանակ ասոր համար կտակ մը շինելու, սատակին մուրհակինելին աս ծառային ձեռքով իրեն խրկած էր, որպէս զի անոնց զօրութեամբ ստակը Լոնտոնի դրամանեղանէն առնուու : Կրիտլի մեռելին դրապաններն ազէկ փնտուելով՝ զանալան թրղթերու մէջ առ բեգերս Լաւրենս ուղղուած երկու նամակ ալ գտաւ զորանք առաւ զգուշութեամբ իր քովը պահեց եւ շտեմարանէն դուրս ելաւ առանց մէկէ մը տեսնուելուու : Երկրորդ օրը մեռելը պատահամի մը գտնուեցաւ, կառավարութիւնը կասկածելով թէ գուցէ աս բանիս տակ եղեռնագործութիւնը մը ծածկուած է, բժշկաց ժողովքի մը յանձնեց որ մեռելը քննեն, սակայն ամէնը միաբան վկայութիւն տուին թէ ծառան բնական մահուամի մեռած է : Աս ժամանակին ետքը կրինտեմի տունն որ սնանկանալու վասնգի մէջ էր, սկսաւ նորէն պայծառանալ եւ օրէ օր աւելի եւս համբաւ եւ հարստութիւն ստանալ :

፩ ተ ዘ የ አ ቅ ስ ሆ ሁ ቅ ሆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Բնութեան անհամար ձեռակերտաց մէջ չկայ
այնպիս բան մ'որ մեր մարմնոցն սքանչելի կազմածին
հաւասարի: Իր կանգուն կեցուածն, իր անդամներուն
իրարու հետ ունեցած գեղեցիկ համեմատութիւնն
որոնք իրեն վեչ եւ հաճոյ տեսք մը կ'ընծայեն եւ իր
գործարանաց վերջին աստիճանի կատարելութիւնն
այնպէս կը ցուցընեն թէ Արարիշն իր աս ձեռագոր-
ծին վրայ բովանդակ իր ճարտարութիւնն ի գործ
դնելով՝ ջանացած է զանիկայ իր պատկերին արժանի
ընդունարան մ'ընել: Առաջիկայ հատուածս արար-
չութեան աս հրաշակերտին ստորագրութիւնը պիտ'որ
ընէ եւ անոր ամէն մէկ գործարանաց յառաջ բերած
գործողութիւնները պիտ'որ ցուցընէ, որոնց վրայ ան-
շուշտ շատ քիչերը ծանօթութիւն ունին:

Ուարդկային մարմինն, ինչպէս թե մեծեւ մտա-
դրութիւն մը յայտնի կը ցուցընէ, զանազան հաս-
տառուն եւ հեղուկ նիւթերէ կազմուած է, որտես
իրարու շետ գեղեցիկ կարդաւ մը միանալով կամ
խառնուելով՝ անոր զանազան գործողութիւններն յա-
ռաջ բերելու կը ծառայեն: Իր արտաքին գրիցը կող-
մանէ գլխաւոր երեք մաս ունի, այսինքն Գլուխ, Բռն
կամ Կոճղ, եւ Անդամներ: Գլուխը մարմնցն ամենէն
բարձր մասն է եւ ըլեղէն զատ՝ Տեսնելու, Լսելու,
Հոտոտելու եւ Շաշակելու զգայարանները կը բովան-
դակէ: Կոճղն՝ որմէ Անդամներն իբրեւ ոստեր գուրս
կ'երկըննան, իր ներքին խոռոչին մէջ կը բովանդա-
կէ կենաց գլխաւոր գործարաններն: Իր վերին մասին,
կուրծքի խոռոչին մէջ են Թորք, Ընչափողին հետ
միացած, եւ Սիրան: իսկ Վարի մասին մէջ՝ որ Առա-
գաստ ըստուած թաղանթով մը վերինէն կը բաժնուի,
կը գտնուին Ստամբուլն, Աղիքը, Լեսարդը, Փայծաղը,
Երիշամունքն ու Փամիփուշտը:

Վարմնցն բովանդակ գործարաններն իրենց ու նեցած մասնաւոր վախճաններուն համեմատ երեք կը բաժնուին, այսինքն Ա. Շարժման, Բ. Կենաց և Գ. Զգայութեան գործարաններ:

Ա. ԺԱՐԺՄԱՆ ՅՈՐԺԱՐԱՆԵՐ

Աս գործաբանաց առանձին պաշտօնն է մարմնոյն զանազան մասերուն շարժումն յառաջ բերելեւ ասոնց կը վերաբերին, Ա. Ասկրները, Բ. Մասնկ (Քնքերը) եւ Գ. Զգերը, որոնց երեքին գործակցութեամբը մարմինը կարող կըլլայ իր անդամները շարժել:

July 1861:

Ոսկիները մարդուն մարմինը կազմող զանգուածոց ամենէն կարծիներն են եւ բոլոր մարմնցն հիմք կամ՝ նեցուկը կը կաղմեն, որուն վրայ միւս նիւթերը կը կպչին. եւ կամ՝ անոր փափուկ մասերուն, ինչպէս ըլքզին, ջղերու եւ ողնաշարի ծուծի իբրեւ պահ-

պահանգ կը ծառայեն: Մարդու մ'ոսկերաց թիւը 254 հատ է որոնք իրարու միացած՝ կը կազմեն անոր կմախաքը: Ոսկրներուն նիւթը հասարակ կիր եւ սոսնձի (նո-նշաւ) նման նիւթը մը (կենդանական սոսինձ) է. կիրն իրենց կարծրութիւն կու տայ իսկ սոսնձանման նիւթը զանիկայ դիւրաւ կոտրելէն կը պահպանէ: Միջակ մեծոյթեամբ չափահաս մարդու մը կմախաքը 10—13 գերմանական լիտոր¹ կը կշռէ որով եւ բոլոր մարմնցն ծանրութեան 11—16 երորդ մասը կը կազմէ, որովհետեւ չափաւոր մեծութեամբ մարդու մը միջին կշիռը 137 լիտը է: Կմախիքը զինքը կազմած ոսկրներուն նկատմամբ երեք մաս կը բաժնուի, այսինքն գլուխ, բռն եւ անդամներ:

Դաշտուն ոսկրներուն մէջ առաջին կարգը կը բռնէ գանգին՝ որուն մասերն են ճակատու ոսկրը, Շառծրակի ոսկրը, Քնքաց երկու ոսկրները, Գագաթի երկու ոսկրներն եւ Սեպի ու Մաղի ոսկրներն: Ան վերջինները գանգին ներսի կողմն են: Ասկէ զատ գըլսուն վրայ կը գանուին, Ռնգաց երկու ոսկրներն որ քթին ներսի կողմն են, Աչաց խոռոշներուն մէջ գըլսունուած Արտասուաց երկու ոսկրները, Խոփի ոսկըն, եւ վերին ու ներքին Շամելեաց ոսկրներն: Ասոնց Խորշերուն մէջ կը գանուին 32 ակռաներն որոնցմէ կէսը վերինին վրայ է եւ միւս կէսը վարինին: Առջեւի ակռաները միայն մէկ արմատով լնդին մէջ կը մանեն. իսկ քովինները մէկ, երկու, երեք մինչեւ չորս բաժնուած արմատներով: Ամէն մէկ ակռան իր արմատին վարի ծայրը պղտիկ ծակ մ'ունի որմէ բարակ ջիղ մ'եւ մէկ արեան անօթ ներս կը մանեն եւ իրեն զգայութիւն ու մնունդ կու տան: Ակռայի նիւթը միւս, ոսկրներուն նիւթէն շատ աւելի կարծր եւ հաստատուն է:

Պատ. 1. Լոճեա ոսկրներուն, գլխաւորն է ՈՂ Նաշարն որ կռնակին մէջտեղը վերէն վար կ'երկըննայ եւ 33 պղտիկ ոսկրներու շարք մըն է: Ասոնք առջեւի կողմը տափակ մաս մ'ունին (Պատկեր 1. ա) որով իրարու հետ կը միանան, իսկ ետեւի կողմն երեք գուրս ցցուած ծայրեր ու մէջտեղը ծակ մը: Աս ծակերն իրարու քով գալով երկայն խողավակ մը կը կազմեն, որ Աղնաշարի ծուծ ըսուած նիւթը կը բովանդակէ: Կողի ոսկրները զսդ զսդ ողնաշարի 12 ոսկրներուն վրայ հաստատուած են՝ որով իրենց թիւը 24ի կը հասնի: Ասոնք իրենց առջեւի կողմն իրարու հետ միացած երկայն ու տափակ ոսկը մը կը ձեւացուցնեն որ կուծքի ոսկը կը կոչուի:

Ենդամեւը միշտ զսդեր կը կազմեն որոնց ամէն մէկուն կազմութիւնն իրարու բոլորովին նման է: Ասոնց ոսկրներն են քամակն որ զսդ մը տափակ եւ երեքանկիւն ձեւով ոսկը է. ասոնց ծայրերն Անրակին հետ կից են որ կրծոց ոսկեր վերի կողմը կը գանուի եւ անոր հետ կը կապուի: Քամակին եւ անրակին իրարու հետ միացած տեղը բոլորա-

¹ Մէկ գերմանական լիտոր (ֆունդ) 176 տրամ է:

ձեւ իորշ կամ ծակ մը կը ձեւանայ որուն մէջ անցած է Բաղկին (Թեւին վերին մասին ոսկրը) գնդաձեւ գլուխը: Բաղկին վարի մասն երկու ոսկը ունի՛ որոնց առջեւինը (բժմամատին կողմն եղածը) Ծղկը, իսկ եւ տեւինն Արմուկ կ'անուանուի: Գատակը (պէլէ) ուլժ պղափիկ ոսկրները ունի, որոնք երկու կարդ շարուած են. աս պղտիկ ոսկրները ձեռքին սաստիկ դիւրաշարժութիւն մը կու տան: Ափը կամ Բուռը հինգ գրեթէ իրարու հաւասար ոսկրներէ կը կազմուի: Մատուցներէն միայն բժմամատն երկու իսկ միւս չորսն երեքական ոսկրները ունին:

Այսորին անդամոց ոսկրներն են Գաւակին որ ողնաշարին վարի կողմը կ'իյնայ եւ զսդ մը լայն ու պնակաձեւ ոսկը է: Ասոնց վարի կողմն ալ բոլորաձեւ խորշեր կան որոնց մէջ մնած է Ազդեր ոսկրներուն գլուխաձեւ գրուխն: Ազդեր ոսկըն իր վարի կողմն ունի տափակ եւ երեքանկիւնի ձեւով պղտիկ ոսկը մ'որ կողմուց կամ գուճք կ'ըսուի: Ատքին վարի մասն ալ երկու ոսկը ունի, որոնց առջեւինն Ալք կամ Խոտուցը կ'անուանուի իսկ ետեւինը Խոչականք: Ատքին թալիի ոսկրներն են եօթն Ռտնարմատի ոսկրներն որոնց մէջն է Ոլքին անմիջապէս տակն Աստման (ցատկելու) ոսկրը. Ռտնամէջն եւ Ռտնամատներու ոսկրներն իրենց թալիին ու գիրբովը ձեռքի ոսկրներուն հետ ըստ ամենայնի նոյն են:

Ասկրներն առհասարակ բարակ եւ շատ զգայուն թաղանթով մը պատած են: Ակռաներէն զատ միւս ամէն ոսկրներուն մէջ շատ քիչ ջիղ եւ բարակ անօթներ տարածուած են որոնք անոնց աճուու կու տան: Ասկերաց գրափ կողմը շիտակ եւ ողորկ է, իսկ ներսի կողմը ծակոտկէն եւ սպնդի նման. ոմանք ալ եղեգի մը պէս բոլորովին սնամէջ: Հասարակօրէն աս սնամէջ ոսկրները ծուծով (Ըլէ+) լեցուն կ'ըլլան: Որշափ որ մարդը կը ծերանայ, նցնչափի իր ոսկրին կիրը կը շատնայ եւ իւղայն մասը կը նուազի, որով աւելի դիւրաբեկ կ'ըլլայ: Յօդից ոսկրներն անմիջապէս իրարու չեն գալչեր, այլ կակուղ կոճիկով իրարու հետ կապուին. ասկէ զատ իրարու հետ կապուած երկու ոսկրներու մէջ Յօդից հեղուկ ըսուած նիւթը կայ, որով անդամներն առանց շիտակ ըստ ամենայն շատ գիւրա կը շարժին:

Մասն կամ թաղերը :

Արմնցն կակուղ եւ մնեղէն մասերն՝ որոնք անոր ամբողջն ձեւն եւ թանձրութիւն մը կու տան, Մատաները կամ գնդերը են: Ասոնք ոսկրներուն անմիջապէս քովը կը գտնուին եւ զանոնք ամէն կողմանէ կատարեալ կը պատեն: Մատաները թիւակարմիր գոյն եւ թելի կամ ժապաւէնի նման ձեւ մ'ունին, եւ կէս մը շիտակ կէս մը ծուռ դիւրաբով իրարու քով կը կենան: Իրենց արտաքյ կարդի ծգականութեամբ՝ ծգականէժի (Էնդլութէ) կտորի մը կը նմանին եւ շատ գիւրաբութեամբ կրնան երկըննալ ու կարճանալ, կամ տարածուիլ եւ ամիտուիւիլ: Ամէն մէկ Մատանին մէջի

կողմն հաստ է եւ գեղ ի ծայրերը կամաց կամաց կը բարակնայ ու Նեարդ ըսուած ձերմակ եւ ամուր նիւթի մը կը դառնայ, որ զինքն ոսկրի մը չետ կը միացընէ: Նեարդն ամենէն աւելի յօդուածներու եւ մանաւանդ մեծ յօդուածոց քավ՝ որոնք աւելի շարժում եւ գործունէութիւն մ'ունին, առատ կը գըտնուի: Մսաններուն ամէն կողմը կը տարածուին բազմաթիւ բարակ Արեան անօմներ (երակներ) որոնք անոնց մնունդ կու տան, եւ շատ շարժման երակներ. բայց զգայութեան երակներ շատ քիչ, այնպէս որ Մսան մը կը նայ կարուիլ առանց մեծ ցաւ պատճառելու:

Ամէն մէկ մնան որոշեալ շարժում մը յառաջ բերելու սահմանուած է. սակայն մարմնոյն քանի մը շարժմանցը շատ մնանունք մէկտեղ գործակից կը լւան: Ասոր համար եթէ մնան մը կտրուի, իր լնելու շարժումը կամ բոլորովին կը դադրի, եւ կամ կը տկարանայ: Եթէ մնան մ'իր շարժմանը մարմնոյն մէկ անդամին դիրքը փոխէ, զոր՝ օրինակ եթէ շիտակ կեցած բազուկը ծուէ, կարող չէ նորէն նյոն անդամն իր առաջն դիրքը դարձնել, պայլ աս բանիս համար նյոն անդամին մէջ զատ մնան մը կայ, որուն գործքն առաջնին բոլորովին հակառակն է: Ասոր համար մնաններն երկու տեսակ կը բաժնուին, պահնքն ծուիչ եւ Ռւղիչ կամ Տարածիչ մնաններ, որոնցմէ առաջներն անդամները կը ծուեն, իսկ երկրորդները զանոնք նորէն կուղղեն կամ իրենց բնական դիրքը կը դարձնեն: Մարդուն բովանդակ մարմնոյն վրայ գըտնուած մնաններուն թիւը 476 հատ է:

Քղեր:

Գղաց նիւթը ձերմակ եւ պանրոյ նման զանդուած մըն է, որ մարմնոյն քանի մը կողմերը մեծ առատութեամբ կը դտնուի եւ այսպիսի տեղերը գորշ զանդուածով մը պատած է. իսկ ուրիշ շատ կողմերն ալ բարակ մէկի ձեւով կը տարածուի: Գլխաւոր ջղի զանդուածն է ըղեղն՝ որ գլխուն վերի կողմը դանդին կամ սկաւառակին մէջ կը փակուի եւ անկէ զատ մասնաւոր մաշկով մը կը պահպանուի: Իր ձեւը կիսաբոլոր է, մեծութիւնը գրեթէ գլխոյ կէսին չափ, եւ խորունկ կտրուածով մ'երկու մաս կը բաժնուի: Գանդին վերի կողմը բանած մասը Մեծ ըղեղն կը սուի եւ խորունկ խորշով մը Պատիկ ըղեղն կը բաժնուի որուն տեղը գլխուն ետեւի կողմն է: Ծղեղը վարի կողմանէ երկրննալով՝ երկայնեալ ծուծը կը կազմէ որ գլխոյն ետեւի կողման ծակէն դուրս կ'ելէ եւ ողնաշարի ծուծին չետ կը միանայ: Մարդու մ'ըղեղն ծանրութիւնը $2\frac{1}{2}$ գերմանական լիտրի չափ է. իսկ բոլոր զղաց ծանրութիւնն Յ լիտր: Քանի մ'արեան երակներ ըղեղն մէջ տարածուելով՝ զանիկայ կը մնուցանեն:

Ծղեղն եւ ողնաշարի ծուծէն՝ բազմաթիւ թելի նման չղեր գուրս կ'երկրննան եւ մարմնոյն ամէն կողմը կը տարածուին: Ասոնք իսկը իրեւ շատ թելերու կապոց մըն են, բայց որչափ որ յառաջ կ'եր-

թան, իրարմէ կը բաժնուին: Զղերն իրենց կատարած գործողութեան համեմատ երկու տեսակի կը բաժնուին, որոնցմէ առաջնին Զգայութեան եւ Անդամնութեան մէջ գործուածոց քավ՝ որոնք աւելի շարժում եւ գործունէութիւն մ'ունին, առատ կը գըտնուի: Մսաններուն ամէն կողմը կը տարածուին բազմաթիւ բարակ Արեան անօմներ (երակներ) որոնք անոնց մնունդ կու տան, եւ շատ շարժման երակներ. բայց զգայութեան երակներ շատ քիչ, այնպէս որ Մսան մը կը նայ կարուիլ առանց մեծ ցաւ պատճառելու:

Պատ. 2.



Պատ. 2.
1. մարմնոյն մէջ բըռնած գիրգիսն յայտնի կը ցուցընէ: 2. ասոնց մարմնոյն մէջ բըռնած գիրգիսն յայտնի կը ցուցընէ: 3. միւս թելակերպ զգայութեան ջղերը կամ մեծ ըղեղն (ա.) կամ երկայնեալ ծուծէն (բ.) եւ կամ ողնաշարի ծուծէն (շ.) իրեւ սուեր գուրս կ'արձակին. Փոքր ըղեղն (զ.) ամենեւին ջիւղ շարձակեր: Ծղեղն կամ Գլխոյ ջղերը 12 զցգ են, զրոնք 2. Պատկերին մէջի թուերը կը ցուցընէն: Թիւ 1. Հոսառութեան ջղերն են. 2. Տեսութեան ջղեր. 3, 4 եւ 6, Աչքին զանազան շարժմանց. 5. Երեքմասնեայ ջղերն՝ որոնք երեւ ճիւղ կը բաժնուին, եւ աս ճիւղերը գարձեալ բազմաթիւ պղտիկ ճիւղեր կ'արձակեն ու քմաց, Արտասուաց, Ակուսներու եւ Լեզուի ջղերը կը կազմէն. 7. Երեսաց ջղեր. 8. Լսութեան ջղեր: Միւս չորս Գլխոյ ջղաց զցգն՝ որոնք երկայնեալ ծուծէն կ'ելնեն, միայն ըստ մեծի մասին մէջ կը տարածուին, եւ ըստ մեծի մասին մարմնոյն ուրիշ կողմերը, գլխաւորաբար լնդերաց, ստամոքսի եւ աղեաց վրայ ճիւղեր կ'արձակեն: Ասկէ մեր մարմնոյն վրայ պատահած քանի մ'երեւոյթները կրնան մեկնուիլ. օրինակի համար եթէ մեր աղեաց մէջ գտնուած որեւերը զանոնք կրծելու ըլլան, անմիջապէս մեր քթին ծայրը քերառելու կը սկսի, եւ մեր ստամոքն աւրուած ժամանակը գլխոյ ցաւ կը զգանք:

Ողնաշարի ծուծն Յ զցգ ջիւղ կ'արձակէ, որոնցմէ 8 զցգը Փողի (Վզի), 12ը, Կոնակի, 5ը Միւսաց եւ 5ը Գաւակի ջիւղ կ'անուանուին: Փողի ջղեղը ըստ 5երրորդէն մինչեւ 8երրորդը մեծ անկուած մը կը կազմէն (շ. Պատ. 2.) ուստի կ'ելէն բազկաց ջղերն: Կողնակի միջաց 5 ջղերն իրարու հետ միանալով անկուած մը կը ձեւանան եւ (և.) աս անկուածէն գուրս կ'երկրննան կամ կ'արձակին ոտից ջղերը:

Պէտք շարժուածէն:

¹ Աս պատկերին մէջ ջղերուն միայն սկսած աւելը կ'երեւաց:

ԶԱՐՑՈՒԹԵԼԻ ԱՆԿՈՂԻՆ ՄԸ.

Գաղղիսցի մէջ հրապարակական խաղի (ժողով) աները տերութեան կողմանէ արգելուէն քիչ մը յառաջ են ։ ուրիշ անդղիսցի բարեկամի մը հետ Փարիզի կը գրաւ-նուէի ։ Դեռ նոյն ժամանակը մեր երկաքն ալ ան հասա-կին մէջ ենք, որուն մէջ քօսանաց եւ զուարծութեանց յօժաբարութիւնն արիշ ամէն միտութիւններէ աւելի զօրսուոր է, եւ մեր աս յօժաբարութիւնը Փարիզի պէս քաղաք մ' աւելի եւս կը տածէր ։ Իրիկուն մ' երկու ընկեր Բալէ բյալին մօտե-րը կը պարտէինք՝ եւ կը խորհինք թէ ինչ զըսասն պալ նոյն իրիկունն անցընենք ։ Ընկերոս առաջարկեց որ Գրասդադի երթա՞ք եւ հօն խաղ խաղմնէք բայց ես նոյն խաղի տան մէջ շատ անդամ քասկներս պարզած ըլլալսվ՝ յանձն շո-սի, այլ ուղեցի պղափկ խաղի տան մ' երթալ եւ հօն ցած ժողովութեան խաղերը աւեմնելով զուարծանալ:

— Լաւ է, ըստ բարեկամն, հոս մօտերք քու ուզաւ
ծիր պէս առն մը կայ, ուր ամենէն հասարակ մարդիկ կը
խաղան: Քանի մը բարե ետքն իրօք խաղի առն առջևն
հասակը: Երբ որ անդիմէն վեր ելանք եւ մեր խցրեն ու
գուազանները ծառացին առինք, խաղի մեծ սրահը առ
բաւեցանք ուր մեր առջեւը տիտր տեսարան մը բայցուեցաւ
Մենք եկած էնք գուեհիկ մարդիկ առնմելու, բայց հոս
գանաւողներուն երեսները գուեհիկէն շատ տարբեր երեւոյթ
ունեին. ամէն մէկը մէյմէկ կատաղի աւազակ կամ ապանով
կը նմանէին: Խոր լւաբժին մը սրահին մէջ կը տիրեր
վոխտ, խաղան երիտասարդն որ խոժու աշքով խաղի
թղթերուն բաճկուելուն կը նայէր, բայց մը չէր խօսեր
թանձրամարմին ու գունատ խաղացողն՝ որ թղթի կաղը
մը ծակելով՝ նշան կ'ինէր թէ քանի անգամ կարմիր թրուլ
թերը շահեցան եւ որչափ անդամ սեւերն, անմասնչ կը
կենար: Խորչուերես ու կարկատուն զգեստներով ծերն որ
իր վերջնի գանգը կորսմացած էր եւ յուսահասութեամբ
միւս խաղացողներան կը նայէր, նոյնպէս անբարբառ կը
կենար: Ես նոյն աելի եկած էի ծիծաղելու համար, բայց
զգացի թէ աս աեսիլի ինձի աելի լալ պիտ' որ պատճառէ
քան թէ ծիծաղ: Ասոր իմ վրաս ըրած ախուր ազդեցու
թիւնը փարատելու եւ քիչ մը զուարթանալու համար խա-
ղի մը սեղանին առջեւ նստայ եւ սկսայ խաղալ: Գժբախ-
տութեամբ, ինչպէս քիչ մ'ետքը պիտ' որ աենառի, սկսայ
շահիլ, անդադար եւ անհաւասարի կերպով շահիլ, այն-
պէս որ հետ զհեաէ բոլոր խաղացողներն իմ բարբարիս
ժողվեցան եւ սկսան իրարս ականչէն հծծել թէ աւ Անդ-
զիացին խաղին տէրը պիտ' որ մնանկարյնէ:

Ուրե խաղացած խաղը կարմիր եւ սեւ (Rouge et Noir) ըստած խալն էր զոր շատ անդամ խաղացած էր, բայց ամենեւին փոյթ ըստած չէի անոր կանոնները սովորելու։ Իմ խաղալը միայն ժամանակ անցրելու համար էր. ապր համար երբեք ան արտաքց կարդի խալի մնալթիւնն զգաց ցած չէի զոր հասարակօրէն խաղանուք կը զգան։ Այսօր սուաշնն անդամ իմացայ թէ ինչ է խալի մնալթիւն։ Բայս տիս յաջողութիւնն իմ խաղալու յօժարութիւնն արտաքց կարդի գրգռեց. իսկզեան միայն շափառ սոսակով մը կը խաղայի, բայց հետզհետէ գումարներն առելցան, սորհին մշշ կ անուազներն իրարու ետեւէ իմ գիմաց ելան եւ մէկիկ մէկի մեծ կրուստ ընելով ետ քաշուեցան։ Խաղացալաց

¹ Առ դեպքը պատմողը Գաւլիներ Վնդդիացին է և

գրդառութիւնն յայսնի կ'իմացուեր . յասածջաւան լւսթիւնն
հայհցութիւններով ու հեծութիւններավ կ'ընդհատէք :
Միայն մեկ մարդ մ'իր հանդարտութիւնը չէր կարսնցոցած
եւ առ մարդոն էր իմ բարեկամն : Ասիկայ իմ քովս եկառ եւ
անդղերէն ըսաւ, թէ մինչեւ նոյն ժամանակն ըսած շահո
բաւական համարիմ եւ առան դառնամ, առ օգտակար խոր-
հուրդը քանի մ'անդամ նորէն կրկնեց . բայց ես իմ յաջո-
ղութենէս բոլրավին գինովցած՝ իր խորհուրդն հաստատու-
թեամբ մերժեցի . ան ատեն ինքն ինձմէ բաժնուեցաւ եւ
ելու գնաց :

Խր երթաւլէն քիչ մ'ետքն ետեւէս մէկը գոչեց . “Աղջէկ բախս , աղջէկ յաջողութիւն : Տէր , ձեզի իմ զինուուշ բական պատօսդոյ վրայ կ'երդնում որ մինչեւ հիմայ պատպիսի բախս մ'երքեք տեսած չեմ” : Գլուխու ետեւ գարձնեւ լով՝ բարձրահասակ եւ երկայն զգեստով մարդ մը տեսայ , որ զարմանալի երեւոյթ մ'առներ , շիլ աշուրներ , մայստի նման բնշացք (պըշչէ) եւ այնպիսի աղասա ձեռաւբներ , որուն նմանը նաև Գաղղլիայի մէջ տեսած չէի : Աս մարդս որ ու րիշ պարագայի մը մէջ անսարքակյու ինձի կասկածելի անձ մը պիտի որ երեւար , նոյն ժամանակն ինձի զէշ ագրեցութիւն մը չըրտու . իրեն ինձի տուած բնշագեղն (էնֆիշէ) բնշգունեցաց եւ ասովլ իրարու հետ բարեկամանցանք : Խր քաջալերիչ խօսքերէն յսրդորսած՝ մեծ եռանգեամբ խաղն յառաջ տարի մինչեւ որ խաղամիրոջ ստակները բովանդակ շահեցայ եւ հարի եղաւ խաղը գարդեցնել :

— Ասակը ձեր թաշկինակին մէջ կապեցէք, պատուական բարեկամ, բառ ինձի ծեր զինուորն։ այսափ մէծ գումար մը ձեր գրավոնին մէջ չէք կրնար գնել։ Թաշկինակս հանեցի եւ ծերուն օգնութեամբն սովորները մէջը տեղաւորեցի որ թնդանուժի մէծ գունդ մը գարձաւ։ եաբր չիւ մը գինի բերել տուի եւ նոր բարեկամիս հւա իրարու եւ երկու աղքին կենդանութեան խմեցինք։ Երբ որ ճամփայ ելլելու կը պատրաստուէի, զինուորը բարեկամ, բառ, քու շեց պարզեցինք, հիմայ հարկ է որ իմ շիշ պարզենք։ Եթ առաջարկութեան առանց գժուարութեան հաւանեցայ եւ երկրորդ շիշն ալ բերուեցաւ։ բայց երբ որ ան ալ պարզեցինք, ինձի այնպէս մ'եկաւ որ հրացեալ հելլուկ մը խմեցի։ րոենոս բացերու մէջ կ'երեւար։

— Խարեկամ, լսի, զինուորին գիտին իմ բոլոր անդամներս կ'այրէ, զավացացիւ ըմպելի մը բերել առաք որտապա անցնի :

— Առաջ մը բերեք, պատաց ծերն։ Աս խօսքը սրա-
հին մէջ գտնուազներուն վայ զարմանալի ազդեցութիւն
մ'ըրաւ. անոնիշագես ամէնդր գուրու ելան եւ աներեւոցիթ ե-
զան, նաևս զինուորն անսնց հետ մէկտեղ սրահէն գուրու
ելաւ։ Բայց քիչ մը ժամանակի ետքը նորէն ետ գարձաւ։
սրահին մէջ ինձձէ եւ իրմէ ուրիշ մարդ չկար։ Իր երեսն
յանկարծ բարոպինն փախուած եւ ծանր ու հանգարտ երե-
սութ մ'առաջ են։

— Ριάρτεκωστ, ρυπαί ήνδη μικρώνειθεωμέ σημ, δέκχε
ξαδιαρ φροντιστρο παιχνιδ' ιμαργαρεγή. ονταψη φθινοπού δέκχε
պատճառած այլայլութիւնը կ'անցնի, եւ նորէն կը սթա-
փիք. այսափ ստակով տուն երթալու համար հարկ է որ ձեր
միտքն զգաստ ըլլայ: Քիչ մը յառաջ հոս գանուող մար-
դիկները տեսան ձեր բրած այնչափ շահը. թէպէտ եւ անձնք
պատռւաւոր մարդիկ են, բայց ամէն մարդ իր տկարութիւնն
ունի: Աւելի բաել հարկաւոր չէ. կարծես թէ միտք կ'ի-
մանար: Իմ խրառո մանկեր բրէք, կատարեալ զգաստանա-

Եւ եաբը կառք մը բերել տուեք, մէջը մտեք եւ կառավարին պատստիրեցէք որ որչափ կարելի է շուտ քչէ: Առով թէ դոք եւ թէ ձեր ստակն ապահով կ'ըլլայ: Աս բան ի գործ դրեք եւ վազը ծեր զինուորի մ'իր տուած պատուաւոր խորհրդին համար շնորհակալ կ'ըլլաք:

Հաղիւ թէ աս իր խօսքը ըլլնցոց, խոհակեր կինը սուրճը բերաւ. իմ զգացած արտաքրո կարգի ծարաւէս մղեալ, ամբողջ գաւաթթը մէկ անդամէն խնկից: Գրեթէ նոյն բուգէն զլսոյ պատոյ մը սկսայ զգալ. ամբողջ սրահը սաստիկ արագաթթեամբ իմ բոլորակա կը դասնար. ծեր զինուորը ջրհանի մը միսոցին նման զիմաց վեր վար կ'ելլէր կիջնար. ականջո այսպէս սաստիկ կը դասնէք որ, ամենեւ մին ձեր չեր: Աս վիճակի մէջ աթուէս ելլայ, առջեւի սեզան բանեցի եւ ընկերի բնակել առան պիտօր երթամ:

— Աիրելի բարեկամ, բաւ զինուորը, մեծ անմտութիւն է աս վիճակին մէջ տուն երթամ. ձեր ստակն ստուգիւ կը կարողընէք. չարագաթթ մը շատ դիւրաթթեամբ կրանայ զծեղ սպաննել եւ ստակն յափշտակել: Ես աս դիշեր հոս պիտօր քնանամ. աս տան մէջ հանդիսա անկողիններ կը գանուին, անննցմէ մէկն առեք, հանդիսա քնացէք եւ վազն առառ ապահովութեամբ ձեր սեղը կ'երթամ:

Խորհելու զրութիւն չունեի. թժրութիւնն երթալլվ կը սաստիանար. ուստի ծերուն առաջարկութիւնն ընդգանցայ. զինուորը զիս թէւէս բանեց, ընդարձակ խուց մը տարաւ ու բարի զիշեր մաղթելով՝ քովէս հեռացաւ: Անմիջապէս պատին առջեւը կեցալ սեղանին քով վազեցի, ջուլ լեցուն սափարը ձեռքս առի, կէոր խնեցի, միւս կէոր կողքին (վեճէ, լալաւար) մէջ լեցուցի եւ երեսս քիչ մը ժամանակ նոյն զովացացի հեղուկին մէջ բանեցի: Աս բանն ինձի շատ օգտաւ բառ. տաքութիւնն ու թժրութիւնն նուազեցաւ միաբա սկսաւ ամիսփախիլ: Առաջնին մոտծմունքս եղաւ ամբողջ զիշեր մը խաղի տան մը մէջ մնալս. վասնագը. ուզեցի սնկէ դարս ելլելու փորձ փորձել, սակայն ամէն կալմ գոցաւած ու կդպուած եր, ուստի որոշեցի ամէն զգաւշացի թէնան միջնորդին ի գործ դնել եւ անկողին մունել. դուսս կզպէլն եւ զանազան կարասիներով աւելի եւ ամրացրնելն երբը, ճրագը ձեռքս առած անկողին տակն եւ սենեկին ուրիշ ամէն կողմերն աղէլ քննեցի, եւ երբ որ սենեկին կամածելի բան մը չտեսայ, ճրագը կրականին (սապայ) վրայ եւ սոկւով լեցուն թաշկինակա բարձիս տակ դրի ու պատիրեցայ:

Ասիայն անմիջապէս զգացի որ չէ թէ միայն քննանալու, այլ եւ ոչ աշարներու գոցելու կարողութիւնն սենիմ. սաստիկ ջերց մը զիս դրաւեց, մարմնոց ամէն կողմը կը դողար: Անկողինն մէջ ամէն կողմ գարձայ, ամէն դիրք փորձեցի բայց պարապ աեղ: Զգացած անհանդութիւնն արտաքրո կարգի եր: Որպէս զիս միաբա քիչ մը զբաղեցրնեմ սկսայ անկողին մէջն աշարներու սենեկին ամէն կողմ պարացընել եւ ամէն կարասիները զնել: Անկողինն անմիջապէս գիմացը պատիկեր մը կախուած եր, որ բարձրահասակ զինուորական մը կը ներկայացընէր, երբ որ զնելու կարգն անոր եկաւ. եւ մուագրութեամբ անոր կը նայէի, յանկարծ ճրագէն արձակուած աղօտ լուսոյն մէջ անոր վաց շարժում մը սկսայ նշնարել: Զգացած այլայլութիւնն արտաքրո կարգի եր. Տէր Ասաւած. ինչ զարհութելի աւելի. պատիկերին մէջն մարդուն խոյրը կամաց կամաց աներեւոյթ կ'ըլլար. արդեօք աշքս զիս կը խարէ. արդեօք

երանզ կը տեսնեմ. ոչ նաեւ պատկերին գլուխն սկսաւ կորսուիլ: Արիւնս երանիներուն մէջ սառեցաւ. պաղ քրտնիք մը զիս պատեց. յայտնի եր որ խցին մէջ գարուն (տուշան) մը լարուած եր, որոշցի ամէն ճիգն ի գործ դնել եւ սեսոր ներ ինչ ըլլան իմանալ: Անկողինը երեսը կանակի վրայ անբաժանելի աշարներու գեր ի վեր ուզգեցի. մէկ հայեցուած մը բաւական եղաւ ինձին բանալու: Անկողինն իր շրան անկիմները չարու բարձր սիւնալիներ անէր, որնց վրայ ձեղուն մը հասաւածուած եր. աս ձեղունը թէթեւ շարժում մը կը ցուցընէր: Կորէն աչքու պատկերին գարւ իր շրանի շետաւետ կը կորսաւէր եւ գրեթէ միայն վարի եղոր գեռ կետի վետաւէ անդամի վրայ առ կը աւելու:

Ինութեամբ վախկոս չեմ. շատ անդամ մահուան վաստակի մէջ ինկած եմ առանց ինքնինը կորսնցնելու, բայց այսօր երբ որ յայտնի տեսայ թէ անկողինս վերի մասը կը շարժի եւ գեպ ի վար կու գայ, աչ ու զարհութանք մը զիս բոլորակին թէթեցաց, եւ երկայն ժամանակ իրբեւ անզգաց անսպանիչ մէկնանցին յափշտակել: Ես աս դիշեր հոս պիտօր քնանամ. աս տան մէջ հանդիսա անկողիններ կը գանուին, անննցմէ մէկն առեք, հանդիսա քնացէք եւ վազն առառ ապահովութեամբ ձեր սեղը կ'երթամ:

Դաստիարակ կամակամ համար կայ: Զգաշութեամբ եւ առանց գըրգին հանելու մահձեն փար յանի, զգեստու հագայ, եւ աթուուի մը վրայ նստած անկողինին ձեղունը կը գիտէի: Ճրագը որ մինչեւ վար վասուած եր, աս միջնոցին մարեցաւ: Անկողինը ամբողջ վերի մասն իր վարացըներսն աթուուի մը վրայ նստած անդամար վար իշնալով անկողինին յայտնի յափշտակել: Զեռքով չօշափեած մէկ վարէս բարակ լամբի մը պէտ երեւցած ձեղունը հասաւ անկողինին նման կացնած մին եր զր վարի կողմնակ կախուած վարացըներն ու զարդերը բոլորավին կը գոյցէին այնպէս որ անկողինին մէջ պատկողին ամենեւին չեր երեւար: Աս հասաւ կաղմանն իր մէջտեղէն սենեկին առաստանդէն դաստիարակ մը վարէս պատկերի մէջ պատուակի (վեճ) մը հետ կը հազարգուէր, սուն գաւանալովիլ, բալը կազմածը գեպ ի վար կը հրուէր, ըստ մակնայնին մէծ մամլոյ (մէկէնէ) մը պէս: Զգահուրելի մէքենան բոլորավին անձայն յառաջ կու գար. ոչ վերի խցէն եւ ոչ ալ մօտաւոր սրահներէն փաքր գըրգին մը կը լուսէր: Աթուուին վրայ անշունչ նստած, սկսայ խորհիլ թէ նաեւ ժմի. դարտն մէջ Գաղղիայի պէտ կրթեալ ուզգի մը մայրաքաղաքն այսպիսի գաղունի սպանութեան մէքենայ կը դանափ: Յայտնի եր որ իմ կարծեալ նոր բարեկամն սրճին մէջ թէթեցացին նիւթ մը կառնած եր, սրճին զիս զիս գիշերը նոյն տան մէջ անյըններու սուխզէ, եւ ան զարհութելի անկողինին չեր զիս պատիկերի շեղած շահած ստակն յափշտակել:

Անկողինը ձեղունը տասոր վայրկեան անկողինս վրայ մնալէն ետքը գարձեալ կամոց կամաց վեր բարձրացաւ. եւ չորս սիւներուն ծայրն հասաւ, սուն գարձեալ իր առաջն ձեւն առաւ. նոյն խէլ մատգի աշք մը չէր կրնար իմանալ թէ ան մահձին մէջ ահագին մէքենայ մը ծածկուած է: Իմ վիճակս գեռ շատ վար վարէս եւ կեսուի առաջն սուխզէ եւ սկսայ իր համար զիս գիշերը նոյն կը կրապով մը պիտօր սուխզէ, եւ ան զարհութելի անկողինին յայտնի յափշտակել: Վագր գըրգին մը կը կրեն իր բարձրացաւ առաջն սուխզէ եւ սկսայ իր համար զիս գիշերը նոյն կը կրապով մը պիտօր սուխզէ, սուխզէ զիս իր բարձր զիս

մասնել, ուստի հարկ էր մեծ զգուշութիւն ի գործ դնել եւ փաթով նցյն վասնգաւոր անկարեխ դուրս ելլել: Դրան կողմանէ փախուստն անկարեխ էր. միայն պատուհանը կը բռնար զիս փրկել. բարեբախուսութեամբ սենեակս փալցէն շատ բարձր չէր: Ոսկիներալ լեցուն թաշկինակս կը նակս կապեցի, հողաթափներս հանեցի եւ ամէն կողմ ողէկ միտ դնելին ետքն՝ որպէս զի իմանամ թէ արդեզք մօտաւոր խցերը ձայն կայ թէ չէ, անձայն պատուհան մօտեցայ, փեղկերն զգուշութեամբ բացի վեր ելայ, եւ սկսայ աչքով քննել իմ գանուած տեւլոյս բարձրութիւնը: Յանկարծ աչքիս պատահեցաւ տանիքէն վար երկնցած անձրեւի խոզակին (օշակ) որ իմ սենեկիս պատուհանէն քիչ մը հեռու էր. կենաց վասնգն ինձի մտածելու ժամանակ թողլ չտուաւ. մէկ ցառքելով խոզակին երկու ձեռուը ըներավո բանեցի եւ անվանդ վերէն վար ոսհեցայ: Վրաց մօտածուիլ դաշցած ուրախութիւնս երր որ նիք զինքս փալցին մէջ դայա: Անմիջապէս սկրաց բոլոր զըրութեամբ մօտաւոր ոստիկանութեան (զաղոցի) պահակատունը վայել. երր որ հեռալով եւ գէշ գաղղիերէնով իմ պատահարս սկսայ պատմել, պահակատան մեծը զիս արբած Անդղիայի մը կարծեց, բայց պատմութիւնս քիչ մը յառաջ երթալիքն ետքն իր կարծիքը փոխեց եւ առանուհնոց զինուորով ճամբայ ելաւ. եւ եղեռնագրծ ութեան աեղն եկաւ: Գեռ ամէն կողմ մուժ պառած էր. ոստիկանը մեծ դղոդիւնով դուռը զարկաւ. ներձէն կիսարթուն մէկը պատուհան մը բայաւ եւ ճրադ մը դորս հանելով հարցուց թէ ոլ է դուռը զարնողն եւ ինչ կ'ողէ:

— Յանան օրինաց դուռը բացէք դուռաց դրսէն ոստիկանաց մեծը:

Այս ահարդին ձայնէն, անմիջապէս ամէն նիգերը բացուեցան եւ զինուորաց ամբողջ դուռնորդ ներս մուաւ: «Եցն կիսարթուն եւ կիսազգեստ մարդին զինով գիմաւորեց, եւ նորէն հարցուց թէ ինչ կ'ողէնք:

— Այս Անդղիային կ'ուղենք տեսնել, պատասխանեց մեծ ոստիկանն որ առ գիշեր հոս պատկեցաւ:

— Անհինայ քանի մը ժամանակ անկէ դնաց:

— Այսու կը խօսիս, աէր մատանապէտ, անիկայ աս դիշեր հոս պատկեցաւ. բայց ձեր առւած անկողինն հանդիսաւ շրմալով եկաւ մեղի քանդատելու. աշտապիկ հիմայ հոս իմ մարդիկներուս մէջն է: Կ'ուզէմ երթաւ իր անկողինը քննել եւ տեսնել թէ իրօք անոր մէջ շատ լու (Քերէ) կայ թէ չէ: Բիքար, բառաւ իր մարդիկներէն մէկուն զինուանապէտը ցացընելով, առ մարդս բանէ, ու ձեռուը ները կազէ: Տան մէջ դանուուղ ամէն արք եւ կանայք մէկիկ մէկի բունուեցան ամենէն յառաջ ձեր զինուորն. ետքը տան քննութիւնն սկսաւ: «Ասի իմ սենեակս եւ անկողինն քննութեան տակ ձգուեցաւ բայց ամենէւին բան մը չիրցան իմացուիլ: Ոստիկանաց մեծը քանի մը ճրադ բերել տառաւ եւ իմ խցին վային երթալիքն ամէն կողմ մատրութեամբ զննելին ետքն իր մարդիկներուն հրամացեց որ դետնի տախտին ետքն ամբունակին երթը քակիեն: Կ'ուզէմ գուրու է հոն սպառած խոզէնին: Փարիզի մէջ մարդ գլուխ 86 լիտր կ'կինայ, որսի միսերն եւ հաւեղէնն ալ մէկան հաջուելով: Պերլինի մէջ իւրաքանչեր բնակին տարին 106 լիտր կը սպառէ: Ամենէն աւելի միս սպառող քաղաքը Ալինան է, ուր առանց որսի միսն եւ հաւեղէնն հաջուելու մարդ գլուխ 162 լիտր միս կ'կինայ:

կը կոմիէր որ անոր մէջ պառկողն անշուշտ քանի մը բոպէի մէջ կը խզդաւէր:

Այս գաղանիկն իմանալին ետքն ոստիկանաց մէծին եւ որիշ զինուորի մ'ընկերութեամբ իմ պանդոկս դարձայ. ճամբան հարցուցի աննաց թէ ուրիշ անդամ նոյն խաղի տան մէջ սպանութիւն պատահած է:

— Եատ անդամ Այն գետին մէջ խզդաւած մարդկիկ տեսած եմ, պատախանեց մեծն, որնց քայլ գրանուած նամակները կ'ըսէին թէ է, իրենց բոլոր սատկը խաղի մէջ կորսնցնելով՝ յուսահատութենէ գետին մէջ նետուած ու խզդաւած էն: Ո գիտէ ասոնցմէ որչափները մեծ գումար մը շահած ու գիշերը խաղի տան մէջ մնացած են, եւ չնի տան մարդկիկ զիրենք սպաննելով եւ. իրենց գրապահնին մէջ պափոխ թուղթը մը գնելով՝ գետ նետուած էն: Ոստիկանութիւնը մինչեւ հիմայ առ մոնիշեր անկողինին վրա ամենւուին ծանօթութիւն չընչէր:

Խզած քննութիւններէն իմացուեցաւ որ ծեր զինուորն իբրեւ գատարկաշջին բանակին վանտուելով՝ առ խաղի տունը բացած՝ եւ անիրաւութեամբ ու սպանութեամբ շատ գտնուեցան: Հակն եւ իր գործակիցներէն երկուոքն ի մահ, իսկ միւս նուազ գործակիցները ծ-հ տարի բանատարկութեան դաշտուած գատարապատուեցան: Աս գէսկըս ինձի մեծ խրատ մ'եզաւ որ անկէ ետքն ամեններին խաղի տներն ուրի չկունեմ եւ ստակուլ խաղ չխաղամ:

— Քաղաքացին կ'ուղէրու տուրեւասը:

ՍԱՆՐԱԼՈՒՐՔ Եւ ԶՈՒՄՐՑԱԼԻՔ

Գաղղիայի հոտաւէտ իւղերու տուրեւասը:

Հարաւային Գաղղիայի տուրեւասին գլսաւոր նիւթերէն մէկն հոտաւէտ իւղերն են որոնք մեծ քանակութեամբ օտար երկիրներ կը խրկուին: Աս իւղերուն համար հարիւտոր եղած ծաղկիները կրաս եւ Կիծծա քաղաքներուն մէջտեղերը, Միջներկրական ծովուն արեւաշատ եղերը կը բուսնին, ուր ձևուր միայն անուամբ ծանօթ է: Վաճառականութեան առ ճիւղին բնչ աստիճանի բնդարձակութիւնն ունենարուն անկէ կրնայ գաղաքար մ'ունեցուելով որ կրասի իւղեինաց վաճառականներէն մինչին մէկը տարին 2500 սումանեան լիտր նարնջի կեղծ 15,000 լիտր կրախենւոց (Քերէ) ծաղիկ. 14,000 լիտր մանուշակ, 5000 լիտր հօրուտամբորտութեան ծաղիկ (Քերէ), 4000 լիտր որնածաղիկ (Էյշաք) եւ այլն կը գործածէ:

Ազգու դեղ:

Յօդացաւէ (Քերէնիւլ) տանջուող մարդ մ'իր բժշշկէն աս ախտին գէմ գեղ մ'ունեցէ: Բժշշկը թղթի մը վայ գեղը գրեւէն ետքն, հւետանիկն լսաւ: Կ'աղաւէմ որ առ գեղն առնելէզ ետքն անոր ըրած ապեցութիւնն ինձի ծանուցանեն. քսան տարիէ վեր սաստիկ յօդացաւ մը զիս կը նեղէ, եւ մինչ եւ հիմայ պարապ տեղ անոր գէմ ապցու գեղ մը փնտուեցի:

Եւրոպայի մեծ քաղաքներուն սպառած միսը:

Լոնտոնի մէջ տարուէ տարի սպառած միսը մարդ գլուխ 107 գերմանական լիտր է. (մէկ գերմանական լիտրն հաւատար է 176 տրամի): աս հաշուէն գուրս է հոն սպառած խոզէնին: Փարիզի մէջ մարդ գլուխ 86 լիտր կ'կինայ, որսի միսերն եւ հաւեղէնն ալ մէկան հաջուելով: Պերլինի մէջ իւրաքանչեր բնակին տարին 106 լիտր կը սպառէ: Ամենէն աւելի միս սպառող քաղաքը Ալինան է, ուր առանց որսի միսն եւ հաւեղէնն հաջուելու մարդ գլուխ 162 լիտր միս կ'կինայ: